

ԴԱՍ 6

ՓԱԽՍԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ (ԶՎԵՐԱԴԱՐՁԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ)

Նախորդ դասում մենք ներկայացրեցինք՝

- փախսարականի կարգավիճակի դադարեցման հիմքերը,
- ազգային անվտանգության համար վտանգի կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար դատապարտվելու և այլ հիմքերով ապաստանի դադարեցումը:

Այս դասում կուսումնասիրենք՝

- փախսարականների պաշտպանության հիմնական սկզբունքները, մասնավորապես՝ չվերադարձելիության սկզբունքը:

Չվերադարձելիության սկզբունքը (որը միջազգային իրավունքում ընդունված է անվանել «non-refoulement»-ի սկզբունք) բխում է մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից և փախսարականների միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից մեկն է: Այն նաև սերտ կապ ունի մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերի, մասնավորապես՝ խոշտանգումների ու դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պարօժի արգելքի հետ: Սակայն մինչ բուն այս սկզբունքը քննարկելը հարկ է հասկանալ, թե առհասարակ որ դեպքում է առաջանում փախսարականի վերադարձի հարցը:

Փախսարականի վարումը

Վարումը ենթադրում է պետության կողմից փախսարականին տրված կարգադրությունը լքելու այդ պետության փարածքը: 1951 թ. Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետությունները չպետք է վարեն իրենց փարածքում օրինական կարգով գտնվող փախսարականին, բացի ազգային անվտանգությամբ կամ հասարակական կարգի պահպանությամբ պայմանավորված դեպքերից: Այս դրույթը արտացոլված է նաև «Փախսարականների և ապաստանի մասին» ՆՏ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ ապաստանը դադարեցվում է, եթե փախսարականը հիմնավոր պարզաբանությամբ վրանգավոր է համարվում Նայաստանի Նանրապետության ազգային անվտանգության համար կամ դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար: Ապաստանի դադարեցման դեպքում կիրառելի է դառնում օրենքի 36-րդ հոդվածը, որը ոստիկանությանը վերապահում է Նայաստանի Նանրապետությունից համապատասխան անձանց վարումը (արտաքսումը) իրականացնելու լիազորություն (եթե դա չի հակասի չվերադարձելիության սկզբունքին):

Ազգային անվտանգություն: Կոնվենցիայի մեկնաբանությունների համաձայն՝ *անձը, որպես կանոն, համարվում է ազգային անվտանգությանը սպառնացող, եթե վտանգում է ապաստանի պետության կառավարությունը, պետության անբողջականությունը, անկախությունը կամ խաղաղությունը, օրինակ՝*

իրականացնում է ապաստանի պետության կառավարության բռնի կամ, այլապես, անօրինական տրապարմանն ուղղված արարքներ, կամ իրականացնում է օտարերկրյա պետության դեմ այնպիսի գործունեություն, որի արդյունքում ապաստանի պետության դեմ կարող է ձեռնարկվել լուրջ միջամտություն:

Վարման (արտաքսման) այս հիմքի կիրառման շրջանակներում կարևոր է հաշվի առնել, որ անձի կողմից համապատասխան արարքների կատարումը պարտադիր չէ, որ հաստատված լինի ուժի մեջ մտնող նորմատիվ: Ավելին, տեսականորեն որոշ արարքներ կարող են նույնիսկ չլինել քրեորեն պարտելի (օրինակ՝ անձը շարունակաբար լուրջ վիրավորանքներ է հնչեցնում օտարերկրյա պետության գլխի կամ պետական խորհրդանիշների դեմ, ինչն ապաստանի երկրի համար սրեղծում է այդ պետության հետ լուրջ ընդհարման վրանգ):

Մյուս կողմից, Կոնվենցիայի travaux préparatoires-ը (նախապարաստական աշխատանքները) և հետագա մեկնաբանությունները վկայում են, որ «ազգային անվտանգություն» (ինչպես նաև «հասարակական կարգի պահպանություն») եզրույթները պետք է մեկնաբանվեն առավել նեղ, և վարումը պետք է համարվի ապաստանի պետության շահերը պաշտպանելու վերջին միջոց, երբ քրեական և քրեադատարարական սովորական գործընթացներն այլևս բավարար չեն:

Նասարակական կարգի պահպանություն: Ինչպես երևում է Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին մասի ու օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համադրությունից՝ օրենսդիրը հասարակական կարգի պահպանությամբ պայմանավորված դեպքերը կապում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու հետ: Նաշվի առնելով այն, որ Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասն առանձնապես ծանր հանցագործություն կատարելը որպես հիմք է ընդունում նույնիսկ չվերադարձելիության սկզբունքի չկիրառման համար, կարելի է վստահ եզրակացնել, որ այն կարող է նաև բավարար հիմք հանդիսանալ փախստականի վարման (արտաքսման) համար:

Ինչ վերաբերում է ծանր հանցագործությունների կատարմանը, ապա պետք է հաշվի առնել, որ ըստ Կոնվենցիայի մեկնաբանությունների՝ գույր հանցանքի ծանրությունը բավարար չէ փաստելու համար, որ այն էապես վրանգում է հասարակական կարգը, հարկապես այն դեպքում, եթե անձը հանցանք է կատարում առաջին անգամ, առկա են մեղմացուցիչ հանգամանքներ ու հանցանքը չի վնասում հասարակության լայն շրջանակների իրավունքներին կամ շահերին (օրինակ՝ եթե ծանր նյութական վիճակից դրդված փախստականը կատարում է ոչ մեծ չափի գողություն բնակարանից): Թեև Կոնվենցիայի այս մեկնաբանություններն ինքնաբերաբար հիմք չեն տալիս անտեսելու օրենքի տառը, սակայն վարման (արտաքսման) որոշում կայացնելիս դրանք, առնվազն, պահանջում են առավել զգոնություն: Այս առումով հարկ է մեծ ուշադրություն դարձնել վերաբերելի միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում (հարկապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 1-ին հոդվածի մասով) «հասարակական կարգ» եզրույթի մեկնաբանություններին:

Երաշխիքներ վարման ժամանակ: Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է վարման (արտաքսման) ենթարկվող անձի ընթացակարգային երաշխիքներ, որոնք Նայաստանի Նանրապետությունում, ըստ էության, ապահովված են,

մասնավորապես, օրենքի 53-րդ հոդվածի դրույթների ուժով: Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 2-րդ մասը պահանջում է վարավող փախստականին փախստական ժամանակ՝ ստանալու մեկ այլ երկիր օրինական կարգով մուտք գործելու թույլտվություն: Ներկայումս օրենքը չի պարունակում այս երաշխիքի ապահովմանը միտված մեխանիզմներ, ինչը ենթադրում է կոնվենցիոն համապատասխան նորմի ուղիղ կիրառման անհրաժեշտություն՝ վարաման մասին որոշման ուժի մեջ մտնելու կամ կատարման ժամկետներն ու կարգը որոշելիս:

Չվերադարձելիության սկզբունք

1951 թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասն արգելում է վարել կամ որևէ կերպ վերադարձնել փախստականին այն փարածքներ, որտեղ նրա կյանքին կամ ազատությանն իր ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պարկանելության կամ քաղաքական հայացքների հիմքով կապառնար վրանգ: «Փախստականների և ապաստանի մասին» ՏՏ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը վրանգի աղբյուրների այս ցանկին ավելացնում է համարարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հիմքով առկա վրանգը: Այս մտպեցումը փրամաքանորեն բխում է այն փաստից, որ նշված հանգամանքները ճանաչված են փախստականի կարգավիճակի շնորհման հիմք՝ ի լրումն պարկանելության կամ հայացքների հիմքով հերապնդումների երկյուղի:

Ստորև կներկայացնենք չվերադարձելիության սկզբունքի սահմանման առանձին փարբերը:

Որևէ կերպ վերադարձնել: Որոշ մասնագետներ և նույնիսկ պետություններ երբեմն պնդում են, որ «որևէ կերպ վերադարձնել» (“refoulement”) եզրույթը չի վերաբերում այն իրավիճակներին, երբ անձին ենթարկում են հանձնման (էքստրադիցիայի) կամ մերժում են նրա մուտքը պետություն՝ մինչ սահմանը հապելը: Նանձնման մասով բավարար է նշել, որ **չվերադարձելիության սկզբունքը** հստակ ամրագրված է «Նանձնման մասին Եվրոպական կոնվենցիայի» 3-րդ հոդվածի 2-րդ մասում: Ինչ վերաբերում է անձի կողմից սահմանի հատումը ջնույափրելուն, ապա հարկ է հաշվի առնել, որ չվերադարձելիության սկզբունքը միտված է երաշխավորելու ոչ թե անձի կացությունը վերադարձնող պետության փարածքում, այլ կանխելու նրա վերադարձը վրանգի աղբյուր կամ օջախ: Որևէ կապ չունի՝ արդյո՞ք մինչ վերադարձն անձը փաստացի մուտք է գործել վերադարձնող պետության փարածք, թե՞ սուկ փորձել է հապել վերջինիս սահմանը: Ուստի, թեև չվերադարձելիության սկզբունքը պետությանը չի պարաավորեցնում թույլափրել փախստականի մուտքն իր փարածք, այն թույլ կրա մերժել նրա մուտքը միայն այն դեպքում, երբ արդյունքում անձը կարող է ապաստանել երրորդ ապահով երկրում կամ կօգրվի այլ բավարար պաշտպանությունից: Այս առումով «վերադարձ» եզրը պետք է հասկանալ առավել լայն իմաստով, և անձի ցանկացած հարկադրված փրեղափոխում հարկ է դիտել որպես վերադարձ: Նարկ է նշել, որ «Փախստականների և ապաստանի մասին» ՏՏ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասում, ի փարբերություն նույն հոդվածի 1-ին մասի, խոսվում է միայն «արտաքաման» արգելքի մասին: Նաշվի առնելով այն, որ այդ դրույթը ևս միտված է փախստականների վերադարձը

կանխելուն, այն պետք է մեկնաբանվի 9-րդ հոդվածի 1-ին մասին և Կոնվենցիայի համապարասխան դրույթներին համահունչ:

Փախստական: Առաջին հայացքից կարող է թվալ, թե **զվերադարձելիության սկզբունքը** կիրառվում է այն անձանց նկատմամբ, ովքեր արդեն իսկ ճանաչված են որպես փախստական: Սակայն ո՛չ Կոնվենցիան, ո՛չ էլ «Փախստականների և ապաստանի մասին» ՆՏ օրենքը «**փախստական**» եզրը չեն կապում կարգավիճակի շնորհման կամ ճանաչման հետ: Նակառակը, փախստական 2-րդ դասից վերհիշեք, թե ինչպես է սահմանվում հասկացությունը սահմանվում է ներառման պայմանների թվարկմամբ, որոնք կարգավիճակի շնորհման հիմք են, այլ ոչ թե հետևանք: Ուստի, անձը կարգավիճակի շնորհման ուժով չի դառնում փախստական, այլ ստանում է այդ կարգավիճակը, քանի որ փախստական է: Նույնիսկ եթե անձը երկրում գտնվում է միանգամայն անօրեն, նա, մինչև նույնն է, պաշտպանված է **զվերադարձելիության սկզբունքով**: Ընդ որում, օրենքն այս սկզբունքը փարածել է նաև ժամանակավոր պաշտպանություն ստացած անձանց վրա՝ անկախ նրանց՝ փախստական հանդիսանալու հանգամանքից:

Տարածքների սահմաններ: Չվերադարձելիության սկզբունքն արգելում է անձին վարել կամ վերադարձնել ոչ միայն ծագման երկիր, այլև ցանկացած փարածք, ուր առկա են այս սկզբունքի կիրառման մյուս պայմանները: Այդ փարածքը նույնիսկ կարող է չունենալ պետության փարածքի կարգավիճակ: [Ինչպես արդեն քննարկվել է «երրորդ ապահով երկիր» եզրույթի առնչությամբ, չվերադարձելիության սկզբունքը արգելում է անձի վերադարձն այնպիսի երկրներ, որտեղ նա բավարար չափով պաշտպանված չի լինի վրանգավոր փարածք վարումից կամ վերադարձից:](#)

Վրանգ առ կյանք կամ ազատություն: Առաջին հայացքից «կյանքին կամ ազատությանը վրանգ» արտահայտությունն ունի ավելի նեղ իմաստ, քան ներառման պայմաններով նախատեսված հետապնդման եղանակները: Սակայն անհեթեթ կլիներ Կոնվենցիայի այնպիսի մեկնաբանումը, որը կթույլատրեր անձի վերադարձն այն երկիր, որտեղից նա փախչել է հետապնդումների հիմնավոր փախստականը:

Երկրորդի պարճառով: Ուստի, քանի դեռ որոշակի փարածքի մասով անձն ունի հետապնդումների հիմնավոր երկյուղ, կհամարվի, որ այնտեղ նրա կյանքը կամ ազատությունը վրանգված է¹⁰: Ակնհայտորեն նման վրանգ կա նաև ցանկացած այլ երկրում, որտեղ անձի կյանքին կամ ազատությանը սպառնում են այլ իրական վրանգներ կամ որտեղ անձը կարող է ենթարկվել խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պարժի:

Ռ-ասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պարկանելություն կամ քաղաքական հայացքներ: Այս եզրույթներն հարկ է մեկնաբանել նույն կերպ, ինչպես որ դրանք մեկնաբանվում են ներառման պայմանների մասով: Առաջին հայացքից այս հիմքերի հիշատակումը բացառում է **զվերադարձելիության սկզբունքի** կիրառումն այն դեպքերում, երբ անձին սպառնացող վրանգը կապված չէ նրա համապարասխան պարկանելության կամ հայացքների հետ: Սակայն, ինչպես կքննարկվի ստորև, փախստականների միջազգային իրավունքից բացի, **զվերադարձելիության սկզբունքը** գործում է նաև մարդու իրավունքների միջազգային իրավունքի շրջանակներում, որն այն երաշխավորում է յուրաքանչյուր անձին՝ անկախ իր հայացքներից կամ պարկանելությունից: Բացի այդ, օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը

նախապեսում է **զվերադարձելիության սկզբունքի** կիրառման լրացուցիչ հիմքեր, ինչն էլ ավելի է նվազեցնում քննարկվող պայմանի կիրառման բացասական հետևանքները:

Բացառություններ զվերադարձելիության սկզբունքից

Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասի ու օրենքի 9- րդ հոդվածի համաձայն՝ զվերադարձելիության սկզբունքը չի կիրառվում այն փախստականի նկատմամբ, որը **հիմնավոր պատճառներով վրանգավոր է համարվում Նայասպանի Նանրապետության անվտանգության համար**, կամ որը, օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված լինելով առանձնապես ծանր հանցագործության համար, վրանգ է ներկայացնում հասարակության համար:

Նաշվի առնելով Կոնվենցիայի մարդասիրական բնույթը՝ հարկ է զվերադարձելիության սկզբունքի բացառություններին փալ առավել նեղ մեկնաբանություն: Ավելին, ինչպես հաստատված է Մարդու իրավունքների հանձնաժողովի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով, մարդու իրավունքների ոլորտում կիրառելի նորմերը բացառում են անձի վերադարձը (նույնիսկ միջնորդավորված, այն է՝ երբ այդպիսի վերադարձը վրա է հասնում այլ երկիր վերադարձի արդյունքում) որևէ երկիր, որպեսզի կխախտվի նրա կյանքի իրավունքը կամ խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը:

Նարաբերակցությունը բացառման պայմանների հետ: Ի տարբերություն բացառման պայմանների, որոնք փախստականի կարգավիճակի տրամադրումը բացառում են սոսկ որոշակի լուրջ հանցանքների կատարման ուժով, կարգավիճակի զվերադարձելիության սկզբունքից բացառությունները ենթադրում են նաև անձի արարքների վրանգավորություն: Այս պատճառով որոշ մեկնաբաններ պնդում են, որ բացառությունները պետք է մեկնաբանվեն էլ ավելի նեղ, քան բացառման պայմանները¹²: Սակայն նաև հարկ է հաշվի առնել, որ բացառման պայմաններից երկուսը վերաբերում են առավել լուրջ հանցագործությունների (միջազգային հանցագործություններ ու ՄԱԿ-ի նպատակներին ու սկզբունքներին հակասող արարքներ), մինչդեռ զվերադարձելիության սկզբունքից բացառությունը կարող է կիրառվել նվազ լուրջ հանցանքների առնչությամբ:

Ինչպես գիտենք, բացառման պայմաններից է ապաստանի երկրից դուրս և նախքան ապաստան հայցելը ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն կատարելը: Այս առումով ընդունված է, որ զվերադարձելիության սկզբունքից բացառությունները չեն կարող հիմնվել նույն ժամանակահատվածում կատարված հանցանքների վրա, քանի որ հակառակ մեկնաբանությունը, ըստ էության, նման իրավիճակներում կհմաստագրվեր 33-րդ հոդվածի 2-րդ մասով նախապեսված բացառությունը (այն է՝ եթե անձի նկատմամբ կիրառելի է բացառման պայման, ապա նա այլևս Կոնվենցիայի շրջանակներում պաշտպանված չէ զվերադարձելիության սկզբունքով, և այդ սկզբունքից բացառությունների հարց առհասարակ չի ծագում):

Տիմնավոր պատճառներով վրանգավոր ազգային անվրանգության համար: Անձի վրանգավորությունը վերաբերում է ապաստանի երկրի համար ապագա վրանգին: Կոնվենցիան և օրենքն ուղղակիորեն չեն նախատեսում վրանգի չափի կամ հավանականության որևէ չափանիշ: Սակայն, հաշվի առնելով Կոնվենցիայի մարդասիրական բնույթը, չվերադարձելիության սկզբունքի հիմնարար բնույթն ու անձի համար վերադարձի չափազանց ծանր հետևանքները, հարկ է կիրառել վրանգի լրջության ու հավանականության բարձր սահմանաչափ: Որպես կանոն, խոսքն այնպիսի վրանգների մասին է, որոնք էապես սպառնում են սահմանադրական կարգին, փարածքային ամբողջականությանը, անկախությանը կամ միջազգային խաղաղությանը, որպիսիք կարող են բխել, օրինակ, լրտեսական, ահաբեկչական գործունեությունից կամ սաբոտաժից¹⁴: Այս առումով կարևոր է վրանգը համեմատել վերադարձի բացասական հետևանքների հետ, և համապատասխան բացառությունները կիրառել միայն այն դեպքում, երբ փախստականի վրանգավորությունը գերակշռում է իր համար վերադարձի դեպքում առաջացող վրանգին (այդ թվում՝ հաշվի առնելով համապատասխան ռիսկերի հավանականությունը և այլընտրանքային լուծումների առկայությունը):

Վրանգ հասարակության համար: Նասարակության համար վրանգը կարող է բխել բացառապես առավել ծանր հանցագործության կատարումից, որի համար փախստականն արդեն իսկ դատապարտվել է ուժի մեջ մտնող դատապարտության: Ինչպես և ազգային անվրանգության համար վրանգի դեպքում, այս դեպքում ևս խոսքն ապագա լուրջ վրանգի մասին է, որը վրարման կամ վերադարձի հիմք է փախստականի միայն այն դեպքում, երբ գերակշռում է վերադարձի բացասական հետևանքներին (այս առումով կարևոր է հաշվի առնել, օրինակ, հանցանքի բնույթը, ռեցիդիվի առկայությունը կամ հավանականությունը և այլն):

Այսպիսով, այս դատում Ձեզ ներկայացրեցինք՝

- փախստականի վրարման հիմքերն ու կարգը,
- չվերադարձելիության սկզբունքը և դրանից բացառությունները:

Նաջորդ դատում կքննարկենք՝

- փախստականների պաշտպանության այլ հիմնական սկզբունքներ՝
 - ապաստանի սկզբունքը,
 - խտրականության արգելքը,
 - անօրինական մուտքի ու կացության պարտելիության արգելքը,
 - երկիրը լքելու իրավունքը,
 - ընտանիքի միասնականության սկզբունքը,
 - ինչպես նաև երկարատև լուծումների և միջազգային համագործակցության սկզբունքները:

ԲԱՌԱՐԱՆ

Վերաբուծում – պետության գործողություն, որը կատարվում է քաղաքացի չհանդիսացող անձին այդ պետության փարածքից դեպի նրա ծագման երկիր կամ երրորդ երկիր հեռացնելով՝ այդ երկրում ընդունելը մերժելուց կամ մնալու թույլտվությունը դադարեցնելուց հետո:

Վերադարձ («refoulement») – փախստականին կամ ապաստան հայցողին հարկադրաբար վերադարձնելն է իր ծագման կամ այլ երկիր, որտեղ նա, հավանական է, կենթարկվի հետապնդումների:

Travaux préparatoires – ֆրանսերենից թարգմանվում է որպես «նախապարաստական աշխատանքներ» (երբեմն կիրառվում է նաև «նախապարաստական փաստաթղթեր» փարբերակը): Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թ. կոնվենցիայի 32-րդ հոդվածը միջազգային պայմանագրերի նախապարաստական աշխատանքները ճանաչում է որպես միջազգային պայմանագրերի մեկնաբանման լրացուցիչ միջոց: Նույն կոնվենցիայի 33-րդ հոդվածը սահմանում է միջազգային պայմանագրերի մեկնաբանման առաջնային կանոնը. պայմանագիրը պետք է մեկնաբանվի բարեխղճորեն՝ պայմանագրի հասկացությունների՝ դրանց համարեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո: Նամարեքստի հետ միաժամանակ հաշվի են առնվում պայմանագրի մեկնաբանման կամ դրա դրույթների կիրառման վերաբերյալ մասնակիցների միջև հետագա ցանկացած համաձայնությունը, պայմանագրի կիրառման հետագա պրակտիկան, ինչպես նաև մասնակիցների հարաբերություններում կիրառվող միջազգային իրավունքի ցանկացած համապատասխան նորմ:

1. UNHCR Commentary on the Refugee Convention 1951 Articles 2-11, 13-37, Published by the Division of International Protection of the United Nations High Commissioner for Refugees, 1997, p. 117.
2. Note on Expulsion of Refugees, UNHCR Doc. EC/SCP/3, 24.08.1977.
3. Canadian Council for Refugees v. Her Majesty, 2007 F C 1262 (Federal Court), 29 October 2007.
4. The Scope and Content of the Principle of Non-Refoulement, Opinion, E. Lauterpacht, D. Bethlehem, Cambridge University Press, 2003.
5. Draft articles on the expulsion of aliens, with commentaries, 2014, UN International Law Commission (A/69/10), Yearbook of the ILC, 2011, vol. II, Part Two.

1. 1951 թ. Կոնվենցիայում պեղծության կողմից փախստականին տրված կարգադրությունը՝ լքելու այդ պեղծության տարածքը, կոչվում է՝

Ա) Արտաքսում – **սխալ է:** 1951 թ. Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է վարաման արգելք: «Արտաքսում» եզրույթն ընդհանուր առմամբ նույնիմաստ է «վարում» եզրույթին, և հենց առաջինն է օգտագործվում Փախստականների և ապաստանի մասին» ՆՆ օրենքում: Մակայն կոնվենցիայում կիրառված է հենց «վարում» (անգլերեն բնօրինակում՝ «expulsion») տերմինը:

Բ) Էքստրադիցիա – **սխալ է:** Անձի հանձնումը (էքստրադիցիան) ենթադրում է քրեական հետապնդման գործընթացի շրջանակներում անձի հարկադիր փոխանցում երրորդ պեղծությանը և, ուստի, էապես նեղ է, քան 1951 թ. Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին մասով արգելված վարումը:

Գ) **Վարում – ճիշտ է:** *Նամաձայն 1951 թ. Կոնվենցիայի մեկնաբանությունների՝ 32-րդ հոդվածում օգտագործված «վարում» եզրույթը նշանակում է պեղծության կողմից փախստականին տրված կարգադրություն՝ լքելու այդ պեղծության տարածքը:*

Դ) Վերադարձ – **սխալ է:** 1951 թ. Կոնվենցիայի մեկնաբանություններն այս կերպ են բացատրում «վարում» եզրույթը: «Վերադարձ» եզրույթն օգտագործվում է 1951 թ. Կոնվենցիայի 33-րդ հոդված 1-ին մասում «վարում» եզրույթին զուգահեռ և, ըստ էության, լրացնում է վերջինիս: Այն հարկ է հասկանալ առավել լայն՝ անձի ցանկացած հարկադրված տեղափոխում իմաստով:

2. 1951 թ. Կոնվենցիայի 32-րդ հոդվածի իմաստով, փախստականը չի համարվի ազգային անվտանգությանը սպառնացող, եթե նա՝

Ա) Վտանգում է ապաստանի պեղծության անկախությունը – **սխալ է:** Եթե փախստականը վտանգում է ապաստանի պեղծության անկախությունը, օրինակ՝ իրականացնում է օտարերկրյա պեղծության դեմ այնպիսի գործունեություն, որի արդյունքում ապաստանի պեղծության դեմ կարող է ձեռնարկվել լուրջ միջամտություն, ապա Կոնվենցիայի մեկնաբանությունների համաձայն՝ նա, որպես կանոն, համարվում է ազգային անվտանգությանը սպառնացող:

Ա) Վտանգում է ապաստանի պեղծության անկախությունը – **սխալ է:** Եթե փախստականը վտանգում է ապաստանի պեղծության կառավարությունը, օրինակ՝ իրականացնում է ապաստանի պեղծության կառավարության բռնի կամ, այլապես, անօրինական տապալմանն ուղղված արարքներ, ապա Կոնվենցիայի մեկնաբանությունների համաձայն՝ նա, որպես կանոն, համարվում է ազգային անվտանգությանը սպառնացող:

Գ) **Վտանգում է ապաստանի պեղծության կառավարության ղեկավարի կյանքը – ճիշտ է:** *Փախստականը համարվում է ազգային անվտանգությանը սպառնացող, եթե իրականացնում է ապաստանի պեղծության կառավարության բռնի կամ այլապես անօրինական տապալմանն ուղղված արարքներ՝ վտանգելով ապաստանի պեղծության կառավարությունը: Մակայն կառավարության ղեկավարի կյանքի դեմ ուղղված արարքները կարող են որևէ կապ չունենալ կառավարության տապալման հետ (օրինակ՝ կարող են կատարվել կենցաղային հողի վրա): Նման դեպքում դրանք*

կարող են դիտվել որպես սպառնալիք հասարակական կարգին, բայց ոչ թե ազգային անվտանգությանը:

Դ) Վրանգում է ապաստանի պետության խաղաղությունը – **սխալ է:** Եթե փախստականը վրանգում է ապաստանի պետության անկախությունը, օրինակ՝ իրականացնում է օտարերկրյա պետության ներկայացուցիչների վրա հարձակում, որի արդյունքում ապաստանի պետության դեմ կարող է ձեռնարկվել զինված հարձակում, ապա Կոնվենցիայի մեկնաբանությունների համաձայն՝ նա, որպես կանոն, համարվում է ազգային անվտանգությանը սպառնացող:

3. 1951 թ. Կոնվենցիայի և առհասարակ որևէ միջազգային պայմանագրի նախապարաստական աշխատանքները կոչվում են՝

Ա) *Damnum emergens* – **սխալ է:** «*Damnum emergens*» լատիներենից թարգմանվում է որպես «առաջացող վնաս»: Միջազգային իրավունքում այս եզրույթը հաճախ օգտագործվում է «իրական վնասներ» իմաստով:

Բ) **Travaux préparatoires** – **ճիշտ է:** «*Travaux préparatoires*»-ը *ֆրանսերենից թարգմանվում է «նախապարաստական աշխատանք»:* Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թ. կոնվենցիայի 32-րդ հոդվածը դրանք *ճանաչում է որպես միջազգային պայմանագրերի մեկնաբանման լրացուցիչ միջոց:*

Գ) *Travaux préliminaire* – **սխալ է:** «*Travaux préliminaire*»-ը ֆրանսերենից թարգմանվում է «նախնական աշխատանք»: Թեև այն առաջին հայացքից նման է միջազգային պայմանագրի «նախապարաստական աշխատանքներ» նշանակող «*travaux préparatoires*» տերմինին, սակայն այն միջազգային իրավունքում որևէ իմաստային ծանրաբեռնվածություն չունի:

Դ) *Ejusdem generis* – **սխալ է:** «*Ejusdem generis*» լատիներենից թարգմանվում է որպես «նույն տեսակի»: Փախստականների միջազգային իրավունքում այդպես է անվանվում այն մոտեցումը, որի համաձայն սոցիալական խումբը որոշվում է ընդհանուր պաշտպանվող բնութագրերի առկայության հիման վրա: Այդ մոտեցման շրջանակներում սոցիալական են համարվում այն խմբերը, որոնք ունեն ընդհանուր և կայուն հատկանիշներ, որոնք բնածին են կամ, այլապես, փոփոխման ոչ ենթակա:

4. Կոնվենցիայի 32-րդ հոդվածի իմաստով անձի կողմից ինչպիսի արարքի կատարումն է թույլ տալիս ինքնաբերաբար նրան որակել որպես հասարակական կարգի համար վրանգավոր՝

Ա) Պարբերաբար կատարվող իրավախախտումը – **սխալ է:** Կոնվենցիայի մեկնաբանությունների համաձայն՝ հասարակական կարգի համար վրանգավոր են համարվում միայն լուրջ հանցագործությունները, որոնք էապես վրանգում են հասարակական կարգը: Ոչ լուրջ բնույթի հանցանքներ կամ իրավախախտումներ կատարելը, անկախ դրանց կատարման պարբերականությունից ու հաճախականությունից, անձին չի դարձնում հասարակական կարգի համար վրանգավոր:

Բ) Ծանր հանցագործությունը – **սխալ է:** Կոնվենցիայի մեկնաբանությունների համաձայն՝ զուր հանցանքի ծանրությունը բավարար չէ փաստելու համար, որ անձը էապես վրանգում է հասարակական կարգը, հարկապես այն դեպքում, եթե անձը հանցանք է կատարում առաջին անգամ, առկա են մեղմացուցիչ հանգամանքներ ու հանցանքը չի վնասում հասարակության լայն շրջանակների իրավունքներին կամ շահերին:

Գ) **Առանձնապես ծանր հանցագործությունը – ճիշտ է:** *Կոնվենցիայի մեկնաբանությունների համաձայն՝ զուր հանցանքի ծանրությունը բավարար չէ փաստելու համար, որ անձն էապես վրանգում է հասարակական կարգը: Սակայն քանի որ առանձնապես ծանր հանցագործություն կատարելը հիմք է նույնիսկ չվերադարձելիության սկզբունքի չկիրառման համար, կարելի է վարտահ եզրակացնել, որ այն նաև ինքնաբերաբար բավարար հիմք է փախստականի վրարման (արդարաման) համար:*

Դ) Լուրջ ոչ քաղաքական հանցագործությունը – **սխալ է:** Նանցագործության քաղաքական կամ ոչ քաղաքական բնույթն անմիջական կապ չունեն անձին հասարակական կարգի համար վրանգավոր որակելու հետ: Ընդ որում, եթե լուրջ ոչ քաղաքական հանցագործությունը անձի կողմից կատարվել է ապաստանի երկրից դուրս և նախքան ապաստան հայցելը, ապա այն բացառման պայմանի կիրառման հիմք է: Իսկ եթե անձի նկատմամբ կիրառելի է բացառման պայման, ապա նա այլևս Կոնվենցիայի շրջանակներում պաշտպանված չէ վրարումից, և՛ հասարակական կարգի համար նրա վրանգավորության հարցն առհասարակ չի ծագում:

5. Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքում «վերադարձ» եզրույթը նշանակում է՝

Ա) Անձի վրարում կամ ցանկացած այլ հարկադրված տեղափոխում – **սխալ է:** Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասն արգելում է անձին վրարել կամ որևէ կերպ վերադարձնել: Ուստի «վրարում» եզրույթն առանձնացված է «վերադարձ» եզրույթից և չի կարող ներառվել դրա մեջ:

Բ) **Անձի ցանկացած հարկադրված տեղափոխում – ճիշտ է:** «Վերադարձ» եզրը պետք է հասկանալ առավել լայն իմաստով, և անձի ցանկացած հարկադրված տեղափոխում հարկ է դիտել որպես վերադարձ:

Գ) Անձի ցանկացած հարկադրված տեղափոխում՝ բացառությամբ հանձնման (էքստրադիցիայի) – **սխալ է:** Թեև որոշ մասնագետներ և նույնիսկ պետություններ երբեմն պնդում են, որ «որևէ կերպ վերադարձնել» եզրույթը չի վերաբերում հանձնմանը (էքստրադիցիային), սակայն չվերադարձելիության սկզբունքը հստակ ամրագրված է «Նանձնման մասին Եվրոպական կոնվենցիայի» 3-րդ հոդվածի 2-րդ մասում և հանձնմանը վերաբերող մի շարք այլ միջազգային այլ պայմանագրերում և, ուստի, «վերադարձ» եզրը հստակ վերաբերում է նաև հանձնմանը:

Դ) Անձի ցանկացած հարկադրված տեղափոխում, բացառությամբ այն դեպքերի, երբ անձին մերժում են մուտքը պետություն՝ մինչ սահմանը հատելը – **սխալ է:** Թեև որոշ մասնագետներ և նույնիսկ պետություններ երբեմն պնդում են, որ «որևէ կերպ վերադարձնել» եզրույթը չի վերաբերում այն իրավիճակներին, երբ մերժում են անձի մուտքը պետություն՝ մինչ սահմանը հատելը: Սակայն չվերադարձելիության սկզբունքը միտված է երաշխավորելու ոչ թե անձի

կացությունը վերադարձնող պետության փարածքում, այլ կանխելու նրա վերադարձը վրանգի աղբյուր կամ օջախ: Ուստի, թեև չվերադարձելիության սկզբունքը պետությանը չի պարտավորեցնում թույլատրել փախստականի մուտքն իր փարածք, սակայն այն չի թույլատրում մերժել նրա մուտքը, եթե արդյունքում անձը հարկադրված կլինի վերադառնալ այնպիսի փարածք, որտեղ նա կարող է ենթարկվել հետապնդումների կամ նրա կյանքին կամ ազատությանը այլապես լուրջ վրանգ է սպառնում:

6. «Փախստականների և ապաստանի մասին» ՆՏ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում 1951 թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքը՝

Ա) Ամրագրված է ոչ ամբողջությամբ – **սխալ է:** «Փախստականների և ապաստանի մասին» ՆՏ օրենքի 9- րդ հոդվածի 1-ին մասը լիարժեք ամրագրում է Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքը, ինչպես նաև նախատեսում է չվերադարձելիության սկզբունքի կիրառման լրացուցիչ հիմքեր:

Բ) Ամրագրված է ճիշտ այնպես, ինչպես որ այն սահմանված է Կոնվենցիայում – **սխալ է:** «Փախստականների և ապաստանի մասին» ՆՏ օրենքի 9- րդ հոդվածի 1-ին մասը ոչ միայն ամրագրում է Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքը, այլև նախատեսում է չվերադարձելիության սկզբունքի կիրառման լրացուցիչ հիմքեր:

Գ) Ի լրումն Կոնվենցիայով նախատեսված հիմքերի՝ փարածվում է նաև այնպիսի իրավիճակների վրա, որոնք ըստ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ճանաչված են որպես փախստականի կարգավիճակի շնորհման լրացուցիչ հիմք – **ճիշտ է:** *«Փախստականների և ապաստանի մասին» ՆՏ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը ոչ միայն ամրագրում է Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքը, այլև նախատեսում է չվերադարձելիության սկզբունքի կիրառման լրացուցիչ հիմքեր՝ վրանգի աղբյուրների ցանկին ավելացնելով այնպիսի իրավիճակներից բխող վրանգը, որոնք ըստ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ճանաչված են որպես փախստականի կարգավիճակի շնորհման լրացուցիչ հիմք (համարարած բռնություն, արտաքին հարձակում, ներքին հակամարտություններ, մարդու իրավունքների զանգվածային խախտումներ ու հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձություններ):*

Դ) Ի լրումն Կոնվենցիայով նախատեսված հիմքերի՝ փարածվում է նաև այնպիսի իրավիճակների վրա, երբ անձի նկատմամբ հետապնդումները կապված չեն նրա պարկանելության կամ հայացքների հետ – **սխալ է:** «Փախստականների և ապաստանի մասին» ՆՏ օրենքի 9- րդ հոդվածի 1-ին մասը ամրագրում է Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքը և նախատեսում է չվերադարձելիության սկզբունքի կիրառման լրացուցիչ հիմքեր՝ վրանգի աղբյուրների ցանկին ավելացնելով այնպիսի իրավիճակներից բխող վրանգը, որոնք ըստ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ճանաչված են որպես փախստականի կարգավիճակի շնորհման լրացուցիչ հիմք: Այս մասով վրանգը կարող է կապված չլինել փախստականի պարկանելության կամ հայացքների հետ: Սակայն Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասով

նախադրեալամ դեպքերի մասով վրանգը, ըստ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, պետք է պայմանավորված լինի փախստականի պարկանելությանը կամ հայացքներով:

7. 1951 թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ չվերադարձելիության սկզբունքը կիրառվում է միայն այն անձի նկատմամբ, ով՝

Ա) Ապաստանի երկրի կողմից արդեն իսկ ճանաչված է որպես փախստական – **սխալ է:** Չվերադարձելիության սկզբունքը կիրառվում է բոլոր փախստականների նկատմամբ, անկախ որևէ երկրի կողմից նրանց որպես փախստական ճանաչելուց կամ ապաստան փրամադրելուց:

Բ) Ապաստանի երկրի կամ որևէ այլ պետության կողմից արդեն իսկ ճանաչված է որպես փախստական – **սխալ է:** Չվերադարձելիության սկզբունքը կիրառվում է բոլոր փախստականների նկատմամբ, անկախ ապաստանի երկրի կամ որևէ այլ երկրի կողմից նրանց որպես փախստական ճանաչելուց:

Գ) Բավարարում է փախստականի սահմանման պայմաններին՝ նախադրեալամ Կոնվենցիայով – **ճիշտ է:** *Ոչ Կոնվենցիան, ոչ էլ «Փախստականների և ապաստանի մասին» ՄՏ օրենքը «փախստական» եզրը չեն կապում կարգավիճակի շնորհման կամ ճանաչման հետ: Նախատեսված, փախստական հասկացությունը սահմանվում է ներառման պայմանների թվարկմամբ, որոնք կարգավիճակի շնորհման հիմք են, այլ ոչ թե հետևանք: Ուստի անձը հանդիսանում է փախստական և օգտվում է չվերադարձելիության սկզբունքի պաշտպանությունից համապատասխան պայմանները բավարարելու ուժով, այլ ոչ թե նրան կարգավիճակի շնորհման ուժով:*

Դ) Բավարարում է փախստականի սահմանման պայմաններին՝ նախադրեալամ Կոնվենցիայով, կամ ստացել է ժամանակավոր պաշտպանություն: – **սխալ է:** Կոնվենցիայի համաձայն՝ անձը համարվում է փախստական և օգտվում է չվերադարձելիության սկզբունքի պաշտպանությունից համապատասխան պայմանները բավարարելու ուժով, այլ ոչ թե նրան կարգավիճակի շնորհման ուժով: «Փախստականների և ապաստանի մասին» ՄՏ օրենքը չվերադարձելիության սկզբունքը փարածել է նաև ժամանակավոր պաշտպանություն ստացած անձանց վրա, սակայն դա բխում է հենց օրենքի, այլ ոչ թե Կոնվենցիայի դրույթներից:

8. Չվերադարձելիության սկզբունքի շրջանակներում «կյանքին կամ ազատությանը վրանգ» արտահայտությունը՝

Ա) Ունի ավելի նեղ իմաստ, քան ներառման պայմաններով նախադրեալամ հետապնդման եղանակները – **սխալ է:** Առաջին հայացքից «կյանքին կամ ազատությանը վրանգ» արտահայտությունն ունի ավելի նեղ իմաստ, քան ներառման պայմաններով նախադրեալամ հետապնդման եղանակները: Սակայն Կոնվենցիայի այդպիսի մեկնաբանումը կթույլատրեր անձի վերադարձն այն երկիր, որտեղից նա փախչել է հետապնդումների հիմնավորված երկյուղի պարճառով և ուստի, քանի դեռ որոշակի փարածքի մասով անձն ունի հետապնդումների հիմնավոր երկյուղ, կհամարվի, որ այնտեղ նրա կյանքը կամ ազատությունը վրանգված է:

Բ) Ունի նույն իմաստը, ինչ ներառման պայմաններով նախադասված հեղուկացուցիչները – **սխալ է:** Քանի դեռ որոշակի փոփոխված մասով անձն իր պարականության կամ հայացքների պարճառով հեղուկացուցիչների հիմնավոր երկյուղ (այսինքն՝ բավարարում է ներառման պայմաններին), կհամարվի, որ այնպեղ նրա կյանքը կամ ազատությունը վրանգված է: Սակայն անձի կյանքին կամ անվտանգությանը կարող է վրանգ սպառնալ նաև այլ երկրներում իր պարականության կամ հայացքների հեղ կապ չունեցող պարճառներով:

Գ) **Ներառում է այն բոլոր դեպքերը, երբ առկա է հեղուկացուցիչների հիմնավոր երկյուղ ծագման երկրում, ինչպես նաև այն դեպքերը, երբ որևէ այլ երկրում անձի կյանքին կամ ազատությանը սպառնում են այլ իրական վրանգներ, կամ որպեղ անձը կարող է ենթարկվել խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պարճի – ճիշտ է:** *Քանի դեռ որոշակի փոփոխված մասով անձն ունի հեղուկացուցիչների հիմնավոր երկյուղ, կհամարվի, որ այնպեղ նրա կյանքը կամ ազատությունը վրանգված է: Բացի դա, ցանկացած այլ երկրում, որպեղ անձի կյանքին կամ ազատությանը սպառնում են այլ իրական վրանգներ կամ որպեղ անձը կարող է ենթարկվել խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պարճի, անձի «կյանքին կամ ազատությանը վրանգ»-ը պեղ է համարվի առկա:*

Դ) Իմաստային առումով անկախ է ներառման պայմաններով նախադասված հեղուկացուցիչներից, և պեղ է մեկնաբանվի մարդու իրավունքների միջազգային իրավունքի շրջանակներում – **սխալ է:** Չվերադարձելիության սկզբունքի շրջանակներում «կյանքին կամ ազատությանը վրանգ» արտահայտությունը լիովին անկախ չէ ներառման պայմաններից: Քանի դեռ որոշակի փոփոխված մասով անձն իր պարականության կամ հայացքների պարճառով ունի հեղուկացուցիչների հիմնավոր երկյուղ, կհամարվի, որ այնպեղ նրա կյանքը կամ ազատությունը վրանգված է: Ուստի հեղուկացուցիչների երկրի մասով «կյանքին կամ ազատությանը վրանգ» արտահայտությունը պեղ է մեկնաբանվի փախստականների միջազգային իրավունքի, այլ ոչ թե՛ մարդու իրավունքների միջազգային իրավունքի շրջանակներում: Մյուս կողմից, այն դեպքերում, երբ չվերադարձելիության սկզբունքի կիրառման հիմք է այլ երկրներում անձի կյանքին կամ անվտանգությանը սպառնացող վրանգը կամ խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պարճի վրանգը, համապարասխան արտահայտությունը պեղ է մեկնաբանվի մարդու իրավունքների միջազգային իրավունքի շրջանակներում:

9. Չվերադարձելիության սկզբունքը չի կիրառվում այն փախստականի նկատմամբ, ով վրանգ է ներկայացնում հասարակության համար՝ օրինական ուժի մեջ մրած դատավճռով դատապարտված լինելով՝

Ա) Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար – **սխալ է:** Ծանր հանցագործություն կատարելը չվերադարձելիության սկզբունքը չկիրառելու հիմք չէ:

Բ) Ցանկացած առանձնապես ծանր հանցագործության համար – **սխալ է:** Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասով նախադասված բացառությունն առաջին հայացքից վերաբերում է ցանկացած առանձնապես ծանր հանցագործությանը: Սակայն առավել ծանր հանցագործությունները, որոնք կատարվել են ապաստանի երկրից դուրս և նախքան ապաստան հայցելը, բացառման պայմանի կիրառման հիմք են: Ուստի այդպիսի

պայմաններում կարարված հանցանքները պետք է դիտարկել բացառման պայմանների, այլ ոչ թե վերադարձելիության սկզբունքից բացառությունների շրջանակներում:

Գ) Առանձնապես ծանր ոչ քաղաքական բնույթի հանցագործության համար – **սխալ է:** Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառվում է ծանր հանցագործությունների դեպքում՝ անկախ դրանց քաղաքական կամ ոչ քաղաքական բնույթից:

Դ) **Առանձնապես ծանր հանցագործության համար, բացառությամբ այն դեպքի, եթե նա համապատասխան հանցանքը կարարել է ապաստանի երկրից դուրս և նախքան ապաստան հայցելը – ճիշտ է:** *Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառությունն ընդհանուր առմամբ վերաբերում է ցանկացած առանձնապես ծանր հանցագործությանը: Այս «բացառությունից բացառություն» են այն հանցագործությունները, որոնք կատարվել են ապաստանի երկրից դուրս և նախքան ապաստան հայցելը, քանի որ դրանք բացառման պայմանի կիրառման հիմք են:*

10. Տիմնավոր պարճառներով ազգային անվտանգության համար վտանգավոր անձը չի օգտվում չվերադարձելիության սկզբունքի պաշտպանությունից, եթե՝

Ա) Առկա է որևէ էական վտանգ ազգային անվտանգությանը – **սխալ է:** Նաշվի առնելով չվերադարձելիության սկզբունքի հիմնարար բնույթն ու անձի համար վերադարձի չափազանց ծանր հետևանքները, նույնիսկ էական վտանգը հիմք կլինի չվերադարձելիության սկզբունքը չկիրառելու համար, միայն եթե այն գերակշռում է փախստականի համար վերադարձի դեպքում առաջացող վտանգին:

Բ) Վտանգը սպառնում է սահմանադրական կարգին, փարաճքային ամբողջականությանը, անկախությանը կամ միջազգային խաղաղությանը – **սխալ է:** Երկրի սահմանադրական կարգին, փարաճքային ամբողջականությանը, անկախությանը կամ միջազգային խաղաղությանը սպառնացող վտանգները, որպես կանոն, համարվում են բավական էական: Սակայն նաև անհրաժեշտ է, որպեսզի դրանք գերակշռեն փախստականի համար վերադարձի դեպքում առաջացող վտանգին:

Գ) Ազգային անվտանգությանը սպառնացող վտանգը բխում է լրտեսական, ահաբեկչական գործունեությունից, սաբոտաժից կամ այլ նմանատիպ արարքից կամ գործունեությունից – **սխալ է:** Լրտեսական, ահաբեկչական գործունեությունը և սաբոտաժը, որպես կանոն, լուրջ վտանգներ են առաջացնում ազգային անվտանգության համար: Սակայն վտանգը չի կարող ենթադրվել սուսկ արարքի որակումից: Անհրաժեշտ է դրանից բխող իրական վտանգի գնահատում:

Դ) **Ազգային անվտանգությանը սպառնացող վտանգը գերակշռում է անձի համար վերադարձի դեպքում առաջացող վտանգին – ճիշտ է:** *Երբ ազգային անվտանգությանը սպառնացող վտանգը գերակշռում է անձի համար վերադարձի դեպքում առաջացող վտանգին, միանգամայն հիմնավոր ու համաչափ է համապատասխան փախստականի նկատմամբ չվերադարձելիության սկզբունքի չկիրառումը:*